ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<18>> մարտի 2024թ.
ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արթուր Ստեփանյանս, ուսումնասիրելով <<Երանոսշին>> ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և <<Երանոսշին>> ՍՊ ընկերության միջև 19.05.2022 թվականին կնքված թիվ ՓՆՄԱԾՁԲ-22-10/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի

լուծելու մասին 01.03.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Համակարգի խափանման պատճառով որոշումը հրապարակվել է 18.03.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել թիվ ՓՆՄԱԾՁԲ-22-10/6-1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2024 թվականի ապրիլի 26-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
2. Պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել թիվ ՓՆՄԱԾՁԲ-22-10/6-1 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արթուր Ստեփանյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am